ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանին

Եղեգնաձորի քաղաքացիական երիտասարդական կենտրոնի
համակարգող, ՀՀ քաղաքացի Լիլիթ Խաչատրյանից

Հասցե՝ Վայոց ձորի մարզ, ք, Եղեգնաձոր, Նարեկացի 18ա.

Հեռ.098 06 56 23

Էլ. Հասցե՝ yeghegnadzorcenter@gmail.com

7. դեկտեմբերի, 2016թ.

Տեղեկության հարցում-1/2016

Հարգելի պարոն Սարգսյան,

Առաջնորդվելով ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքով՝ խնդրում եմ ինձ տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. ՀՀ Վայոց ձորի մարզպետին առընթեր գործող երիտասարդական խորհրդի բոլոր այն նիստերի արձանագրությունների եւ որոշումների պատճենները, որոնք գումարվել են այդ խորհրդի ստեղծումից ի վեր:
2. Արդյո՞ք որեւէ կերպ հրապարակվել են վերոհիշյալ արձանագրությունները եւ որոշումները, եթե այո, ապա խնդրում եմ ինձ տրամադրել հրապարակման հասցեները կամ համացանցային հղումները:
3. ՀՀ Վայոց ձորի մարզպետին առընթեր գործող երիտասարդական խորհրդի կանոնադրության կամ աշխատակարգի պատճենը, եթե կա այդպիսի փաստաթուղթ:
4. ՀՀ Վայոց ձորի մարզպետին առընթեր գործող երիտասարդական խորհրդի գործող կազմը, եւ՝ անդամներից յուրաքանչյուրի ներգրավման մեխանիզմը: Եթե անդամների ներգրավման մեխանիզմը սահմանված է որեւէ իրավական ակտով, խնդրում եմ ինձ տրամադրել այդ իրավական ակտի պատճենը:

Խնդրում եմ հարցված տեղեկությունները տրամադրել, դրանք ուղարկելով իմ հետեւյալ էլեկտրոնային հասցեին՝ yeghegnadzorcenter@gmail.com

Կանխավ շնորհակալություն

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶ
Մուտքի թիվ 6287
12 12 2016

Տեղեկություն հարցնող՝

Լիլիթ Խաչատրյան